# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԽՆՄԱԿԱՆՔ

● Կիր. 1 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան։

● Բշ. 2 Նոյմ. — Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ։ Պատարագեց, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան։

● Շբ. 7 Նոյմ. — Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկ. Գազանճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջինոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափորապետն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։

● Կիր. 8 Նոյմ — Գիւտ Խաչ (326): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուր և մատուցուեցաւ Ս. Պատարագը։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։ Ապա Միաբանութիւնը, զգեստաւորեալ, իջաւ Գիւտ Խաչի այրը, և անկէ բարձրանալով Ս. Գերեզմանին շրջափակը, երիցս դարձաւ անոր՝ և մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ։ Թափորապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. որ ամպհովանիի ներքև, Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, կ'օրհնէր Տաճարը լեցուցած բազմութիւնը։ «Խաչի քո Քրիստոսի երգեցողութենէն ետք, թափօրը վերջ գտաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, գրեթէ կէսօրին։

● Շբ. 14 Նոյմ. — Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան։

● Կիր. 15 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

● Ուր. 20 Նոյմ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Բ. [illegible] Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. նախագահեց բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի և պարագայից հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին։

● Կիր. 22 Նոյմ. — Դարձեալ առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր, ըստ սովորութեան, Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան, նոյն վանքի Տեսուչը։

● Շբ. 28 Նոյմ. — Առաք. Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան։

● Կիր. 29 Նոյմ — Բարեկենդան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Եշ. 3 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Ուր. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկ. Գաբրիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ուր յետ «Հրաշափառով հանդիսաւոր մուտքի ի Ս. Աստուածածնայ Տաճար, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և Կիւլպէնկեանի և իր գերդաստանի ննջեցեալներու հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։

● Շբ. 5 Դեկտ. — Գրիգորի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբեղայ։

● Կիր. 6 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան։

● Ուր. 11 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հմայեակ Եպս.։

● Շբ 12 Դեկտ. — Ս. առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Կիր. 13 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Շբ. 19 Դեկտ. — Նիկողայոսի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, երկու օրեր առաջ զուգադիպած Հարցն Եգիպտացւոց տօնին առիթով։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան։ Վերաբերումը կատարուեցաւ

digitised by A.R.A.R.@

Մայր Տաճարի ներքին գաւիթը գտնուող Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն։

— Այսօր կատարուեցաւ Եափայի Ս. Նիկողայոս վանուց տօնախմբութիւնը։ Պատարագեց Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան։ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. իր քարոզին մէջ անդրադարձաւ Ս. Նիկողայոսի հրաշալի կեանքի մասին։ Ներկայացուց զինք իբրև մեծահաւատ և մեծագործ հայրապետ, ինչպէս նաև պաշտպան նաւավարաց։

● Կիր. 20 Դեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աստուածածնայ խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զըլճանեան։

● Բշ. 21 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հմայեակ Եպս.։

● Գշ. 22 Դեկտ. — Ցրութիւն Ս. Աստուածածնի։ Առաւօտուն, Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինգոյեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ի կարգով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսապետ Սրբազան Հայրը։

● Ուր. 25 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Շբ. 26 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։ Վերաբերումը կատարուեցաւ Տաճարի դասին մէջ սուրբին նկարով կառուցուած սեղանին վրայէն։

● Կիր. 27 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Ցովակիմեան։

## ԳԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Կիր. 1 Նոյմ. — Ֆրանսայի Վարչապետ Ժագ Շիրաքի Իսրայէլ այցելութեան առթիւ, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. ներկայ եղաւ Քնեսէթի մօտ պարտէզին մէջ եղած դիմաւորութեան։

● Բշ. 2 Նոյմ. — Ուփսալայի (Շուէտ) եպիսկոպոսը իր հետեւորդներով այցելեց Ս. Յակոբեանց Մայր Տաճար, ուր Ս Գլխադրի ուխտէն ետք իրեն տրուեցան հարկ եղած բացատրութիւնները։ Ապա բարձրացաւ Պատրիարքարան, ուր, ի բացակայութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ընդունուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. ի կողմէ։

● Գշ. 3 Նոյմ. — Իսրայէլի Նախագահ Վսեմ. Հայիմ Հէրցոկի Տանիմարքա մեկնումին առթիւ, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. ողջերթի գնաց Քնեսէթի դիմացի պարտէզը։

● Ուր. 13 Նոյմ. — Կրետէի Հայոց Հովիւ Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Հալլաճեան շաբթուան մը համար ժամանեց Սուրբ Քաղաք։

● Կիր. 15 Նոյմ. — Երեկոյեան, Պելճիքայի Պօտուէն Ա. Թագաւորի ծննդեան տարեդարձի առթիւ, Պելճիքական Նոր Հիւպատոս Պր Պէրնարտ Փիէռի կողմէ, American Colonyի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Հոգշ. Տ. Սևան Վրդ.։

● Բշ. 30 Նոյմ. — Երեկոյեան, St. Andrew's Dayի առիթով, Սկովտական եկեղեցւոյ մէջ կայացած արարողութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Հոգշ. Տ. Գուսան Աբղ., ինչպէս նաև Տիար Սահակ Գալայճեան և երկու Սարկաւագներ։ Հայր Գուսան մեներգեց «Ուրախ լեր»ը, իսկ Պր. Սահակ և Սարկաւագներ երգեցին «Գովեա Երուսաղէմ զՏէր»ը։ Ապա քօլէճի սրահին մէջ տրուեցաւ ընդունելութիւն, որուն իրենց մասնակցութիւնը բերին նաև Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Եշ. 10 Դեկտ. — Միամիէն (Ֆլորիտա) Ս. Աթոռ ժամանեց Ս. Ուխտիս Միաբան Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինգոյեան, Ամանորն ու Ս. Ծննդեան տօնը մեր մէջ անցընելու համար։

● Շբ. 19 Դեկտ. — Կէսօրէ առաջ, ուխտաւորաբար Ս. Երկիր այցելող Իտալական Հանրապետութեան Նախագահ Ֆրանչէսքօ Քօսիկա այցելեց Ս. Յարութեան Տաճար, ուր մուտք գործեց «Հրաշափառ»ով։ Պատանատեղիի մօտ Ֆրանչիսկեանց Կիւսթոտը, իսկ Ս. Գերեզմանի դրան Լատինաց Պատրիարքը ըրին բարի գալստեան ճառեր։ Երկու սրբավայրերուն առջև մեծայարգ քաղաքապէտը ձնրադիր և ջերմեռանդ աղօթեց։ Մեր կողմէ ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. և Հոգշ. Տ. Սևան Վրդ.։

● Կիր. 20 Դեկտ. — Սուրբ Երկիր այցելող Իտալիոյ Արտաքին Գործոց Նախարար Ճուլիօ Անտրէօթթիի համեստափայլ Տիկինը կէսօրէ ետք այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

● Բշ. 21 Դեկտ. — Երեկոյեան, Խանուկայի (Մակաբայեցւոց) տօնին առիթով, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ, Քաղաքապետարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Դշ. 30 Դեկտ. — Տարեփակի առիթով, Իսրայէլի Պետութեան Նախագահ Վսեմ. Հայիմ Հէրցոկի ապարանքին մէջ կայացած քրիստոնէական համայնքապետերու աւանդական ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս Պատրիարք Հայրը, Պատր. Փոխ. Գերշ Տ. Կիւրեղ Եպս., Գերշ. Տ. Հմայեակ Եպս. և Տիար Գ. Հինդլեան։

digitised by A.R.A.R.@